*Հավելված N1*

*ՀՀ ֆինանսների նախարարի 2017 թվականի*

*մայիսի 30-ի N 265-Ա հրամանի*

# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
## հրավերի պարզաբանման մասին

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի 2018 թվականի հուլիսի 2-ի թիվ 2 որոշմամբ և հրապարակվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն

Ընթացակարգի ծածկագիրը ՀՀՌՑ-ԲՄԱԾՁԲ-18/19

Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց ՓԲ ընկերության /ՀՀՌՑ ՓԲԸ/ կարիքների համար Երևանի H=308մ բարձրությամբ հեռուստաաշտարակի մետաղական կոնստրուկցիաների հակակոռոզիոն պաշտպանիչ շերտի վերականգնման և ներկման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀՌՑ-ԲՄԱԾՁԲ-18/19 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերի վերաբերյալ 01.07.2018թ. ստացված հարցադրումները և դրանց վերաբերյալ 02.07.2018թ. տրամադրված պարզաբանումները`

Հարցադրում N 1

Համաձայն հրավերի տեխնիկական բնութագրի 2.8 կետի (Աշխատանքները կատարվելու են գործող ալեհավաքների և ալեցիրների հարևանությամբ, գերբարձր հաճախականային ճառագայթման ազդեցության պայմաններում, որից պաշտպանվելու համար անհրաժեշտ է օգտագործել հատուկ արտահագուստ և միջոցներ) որոշ աշխատանքներ պետք է կատարվեն ճառագայթման ազդեցության պայմաններում: Հաշվի առնելով վերոգրյալը խնդրում եմ պարզաբանել՝ հատուկ արտահագուստը տրամադրում եք դուք (պատվիրատու), թե մասնակիցը (կապալառուն) և այդ արտահագուստը ինչ աստիճանի պաշտպանվածություն պետք է ունենա,

Պարզաբանում N 1

Հատուկ արտահագուստը աշխատակիցներին տրամադրում է մասնակիցը, պաշտպանվածության աստիճանը՝ համաձայն գործող տեխնիկական նորմերի:

Հարցադրում N 2

Համաձայն հրավերի տեխնիկական բնութագրի 2.9 կետի (Գործող անտենաների անմիջական հարևանությամբ կատարվող աշխատանքները, որոնց իրականացումը կպահանջի հեռարձակման տեխնիկական միջոցների անջատում, պետք է կատարվեն Պատվիրատուի հետ նախապես համաձայնեցված ժամանակացույցով) մասնակիցը (կապալառու) պետք է համաձայնեցնի պատվիրատուի հետ իր կողմից կատարվելիք աշխատանքների ժամերը կապված հեռարձակման հետ: Հաշվի առնելով վերոգրյալը խնդրում եմ պարզաբանել՝ հնարավոր է արդյոք մասնակիցը (կապալառուն) չկարողանա աշխատել առնվազն 8 ժամ, և եթե այո, ապա այդ բաց թողնված ժամանակը հետո կոմպենսացվելու է (այդ չափով պայմանագրի ժամկետը երկարաձգվելու) թե ոչ:

Պարզաբանում N2

Մասնակիցը պատվիրատուի հետ անպայման պետք է համաձայնեցնի իր կողմից կատարվելիք աշխատանքների ժամերը՝ կապված հեռարձակման և անվտանգ ճառագայթման ազդեցության պայմանների ապահովման հետ:

Մասնակցին օրվա ընթացքում կտրամադրվի 8 ժամ աշխատանքային ժամանակ՝ աշտարակի տարբեր նիշերում աշխատելու համար:

Հարցադրում N3

Արդյոք նմանատիպ կհամարվի վերջին երեք տարում կատարված ցանկացած աշխատանք, որի CPV կոդերի սկզբի երեք թվերը (խումբ) կհամընկնեն հրավերում նշված CPV-ի 45441160/1 սկզբի երեք թվերին (խումբ),

Պարզաբանում N 3

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 65-րդ կետով՝ Գործարքները համարվում են համանման (նմանատիպ), եթե դրանք դասվում են հրավերով կամ նախաորակավորման հայտարարությամբ նախատեսված՝ համանման համարվող տնտեսական գործունեության նույն խմբերում: Համանման համարվող տնտեսական գործունեության տեսակները և դրանց գնահատման կարգը սահմանվում են սպառիչ և առանց երկակի մեկնաբանության հնարավորության: Հրավերով սահմանված է, որ մասնակցի կողմից պետք է ներկայացվեն մետաղական կայմերի և աշտարակների կամ նմանատիպ ինժեներական կառույցների ներկման աշխատանքների կատարումը, որը համարվում է հստակ և չունի տարաբնույթ (երկակի) մեկնաբանելու հնարավորության:

Հարցադրում N4

Համաձայն հրավերի <<Աշխատանքային ռեսուրսներ>> չափանիշը գնահատվում է բավարար, եթե մասնակցի կողմից ներկայացված ռեսուրսներն ունեն 3 տարվա աշխատանքային փորձ: Խնդրում եմ պարզաբանել 3 տարվա աշխատանքային փորձը վերաբերում է բանվոր լինելուն, ներկարար լինելուն, թե բարձրության վրա աշխատանքներ կատարելու թույլտվությանը:

Պարզաբանում N 4

Երեք տարվա աշխատանքային փորձը, համաձայն հրավերի, վերաբերում է աշխղեկին և ներկարար բանվորին: Բարձրության վրա աշխատանքների կատարման թույլտվությանը չի վերաբերում:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել ՀՀՌՑ-ԲՄԱՇՁԲ-18/19 ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար Մարինա Նիկոլյանին:

Հեռախոս՝ 010 65 40 73:

Էլեկտրոնային փոստ՝ hhrc.gnumner@tna.am: